Ավելի շատ ժամանակ Մաքսի հետ



Աշլին Բ., 12 տարեկան,
Վաշինգտոն (ԱՄՆ)

Մի անգամ ընտանիքիս, մի քանի ընկերների և շանս՝ Մաքսի հետ գնացի արշավի լողափում: Ողջ օրը մենք լողացինք ու խաղացինք: Իսկ երբ մութն ընկավ, հրավառություն դիտեցինք: Մենք բոլորս հրաշալի ժամանակ անցկացրինք:

Երբ հրավառությունն ավարտվեց, ես փնտրեցի Մաքսին: Բայց նա չկար: Ես խուճապի մատնվեցի և գոռացի, որ Մաքսը չկա: Արցունքները հոսում էին դեմքիս վրայով, երբ մենք բոլորս նրան էինք փնտրում անտառում: Ես մի նուրբ ձայն զգացի, որը հուշում էր ինձ աղոթել, ուստի, ես սկսեցի աղոթել: Բայց ես ինձ շատ թույլ էի զգում և վախենում էի Մաքսի համար:

Մենք չգտանք նրան, ուստի շարժվեցինք դեպի մեր վրանը: Ես անընդհատ աղոթում էի մտքում, բայց սկսեցի կորցնել հույսս: Այնքան լաց եղա, մինչև քնեցի:

Մի քանի ժամ անց ծնողներս արթնացրին ինձ: Մաքսը նստած էր իմ կողքին: Ծնողներս մեր վրանից դուրս լսել էին Մաքսի վզկապի ձայնը: Ես ամուր գրկեցի նրան և լուռ շնորհակալություն հայտնեցի Աստծուն իմ աղոթքներին պատասխանելու համար:

Երեք տարի անց Մաքսը վնասեց մեջքը և ուժեղ ցավեր ուներ: Նրան հնարավոր չէր բուժել, ուստի մենք ստիպված էինք հրաժեշտ տալ նրան: Երկնային Հայրը մխիթարեց ինձ և խաղաղություն տվեց: Սուրբ Հոգին հիշեցրեց ինձ, որ մենք գրեթե կորցրել էինք Մաքսին երեք տարի առաջ, բայց Աստված օգնեց մեզ գտնել նրան: Ես երախտապարտ եմ, որ Նա մեզ ավելի շատ ժամանակ տվեց Մաքսին սիրելու համար:

Ես գիտեմ, որ Աստված պատասխանում է աղոթքներին և մխիթարում է փորձությունների ժամանակ: Հիսուս Քրիստոսի Քավությունը բոլորի համար է: Ես այնքան շնորհակալ եմ այն ամենի համար, ինչ Հիսուս Քրիստոսը և Երկնային Հայրն արել են իմ և իմ ընտանիքի համար: ●



ՆԿԱՐ՝ ՔԵՍԵՐԻ ԲՐԱՆՍՈՆԻ